ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿՐԵՏԵՈՒՄ

(3-10 հունիսի 2005 թ.)

Սույն թվականի հունիսի 3-10-ը Տիեզերական Պատրիարքության հրավերով Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) Կենտրոնական Կոմիտեն իր տարեկան հանդիպումն ունեցավ Ագիոս Նիկոլաոս քաղաքում (Կրետե, Հունաստան): ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում է Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

ԵԵԿ-ի 40 անդամներից բաղկացած այս ղեկավար մարմնի աշխատանքները նախագահում էր ԵԵԿ-ի նախագահ Ժան Առնոլդ դե Կլերմոնը: Փոխնախագահն էր Տիրանայի և համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Անաստասիոս Արքեպիսկոպոսը:

Օրակարգի գլխավոր հարցը ԵԵԿ-ի նոր Գլխավոր Քարտուղարի ընտրությունն էր: Ներկայիս Գլխավոր Քարտուղարը՝ դոկտ. Քեյթ Քլեմենթսը, ութ տարիներ ծառայելուց հետո, սույն թվականի նոյեմբերի վերջին թոշակի է անցնելու:

Հունիսի 4-ին, նիստը սկսելուց առաջ, նիստերի դահլիճում տեղի ունեցավ ուղղափառ աղոթք, որին հաջորդեց տեղի թեմական առաջնորդ Նեկտարի Մետրոպոլիտի (Տիեզերական Պատրիարքություն) ողջույնի խոսքը: Ներկաներին ողջույնի խոսք ուղղեցին նաև Ագիոս Նիկոլաոս քաղաքի քաղաքապետը և Լասսիտիի նահանգապետը:

Հունիսի 5-ին, կիրակի օրը, հանդիպման մասնակիցները Նեապոլիս քաղաքի Մայր Տաճարում ներկա գտնվեցին Սուրբ և անմահ Պատարագի: Հունիսի 6-ին տեղի ունեցավ նոր Գլխավոր Քարտուղարի ընտրություն. սույն թվականի դեկտեմբեր ամսից այդ պաշտոնը կվարի Անգլիկան հոգևորական Քոլին Վիլյամսը:

Հունիսի 10-ին հանդիպման մասնակիցները հրապարակեցին մի հայտարարություն՝ վերնագրված «Եվրոպայի սահմանադրական համաձայնագրի վերաբերյալ քաղաքացիական մասնակցության կոչ»:

Այս փաստաթղթում վերստին հաստատվում է ԵԵԿ-ի պատրաստակամությունը՝ աջակցելու համաեվրոպական սահմանադրության ծրագրին որպես միացյալ Եվրոպա առաջնորդող կարևոր քայլ: Հայտարարությամբ նաև հաստատվում է, որ սահմանադրության այդ ծրագիրն ունի այնպիսի դրույթներ, որոնք կարող են ավելի մեծ հնարավորություններ ընձեռել Եկեղեցիներին ու քաղաքացիներին՝ իրենց մասնակցությունը բերելու քաղաքական որոշումներ կայացնելու հարցում:

Միևնույն ժամանակ իր հայտարարությամբ ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեն ընդունում է, որ Ֆրանսիայում և Հոլանդիայում անցկացված հանրաքվեի արդյունքները կարող են ազդել ամբողջ Եվրոպայի վրա: Այս փաստաթղթի համաձայն, Կենտրոնական Կոմիտեի անդամները «լրջորեն ընդունեցին ժողովրդի անհանգստությունը, որի պատճառը Եվրոպայի բնակչության հետ ունեցած ոչ բավարար քննարկումներն էին, և որի հետևանքով ընդունված որոշումները չեն արտացոլում ժողովրդի հայացքները»:

Սահմանադրության ծրագրի նկատմամբ բացասական վերաբերմունքի մյուս պատճառներից են՝ ընդհանուր արժեքների վրա հիմնված անհրաժեշտությունները Եվրոպայում և մարդկանց անվստահությունը իրենց տնտեսական և սոցիալական ապագայի նկատմամբ, որը պայմանավորված է շուկայական օրենքների գերիշխանությամբ:

«Որոշումներ կայացնող անձինք պետք է երկխոսության մեջ մտնեն հասարակության բոլոր շերտերի հետ՝ հարգելով նրանց հայացքները, մտահոգություններն ու համոզմունքները: Մարդիկ պետք է իմանան, որ իրենց ապագան չի որոշվում առանց իրենց գիտության ու մասնակցության: ԵԵԿ-ն ընդգծում է, որ Եվրոպան պետք է կառուցել այնպիսի արժեքային համակարգի հիման վրա, որն արտացոլում է մարդկանց հայացքների բազմազանությունը, որպեսզի Եվրոպայի բնակչությունը կարողանա ամբողջությամբ հաղորդակից լինել այդ համակարգին: Նոր Եվրոպա կառուցելու գործընթացը պետք է հիմնվի ընդհանուր արժեքների վրա, ինչպիսիք են՝ հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ, խաղաղության ու արդարության հաստատումը, պատասխանատվությունն ու համերաշխությունը: ԵԵԿ-ն քաջատեղյակ է, որ քրիստոնեական արժեքների մասին հիշատակության բացակայությունը նպաստել է սահմանադրության նկատմամբ Եվրոպայում տիրող բացասական վերաբերմունքին»,- նշված է հայտարարության մեջ:

Միևնույն ժամանակ ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեն կոչ արեց քաղաքական գործիչներին ու Եվրոմիության կառույցների ղեկավարներին՝ առավել լրջորեն վերաբերվել մարդկանց անհանգստություններին և ավելի մոտ կանգնել քաղաքացիներին: Կենտրոնական Կոմիտեի անդամները ենթադրում են, որ սահմանադրական համաձայնագրի վավերացման գործընթացը լուրջ մարտահրավեր է դարձել, որին ի պատասխան Եկեղեցիները պետք է ուժեղացնեն ներքին քննարկումները եվրոպական թեմաներով: Հայտարարության համաձայն, ԵԵԿ-ն «կշարունակի երկխոսությունը քաղաքական գործիչների ու ժողովրդի հետ՝ կոչ անելով կառուցել ժողովրդավարական ու միացյալ Եվրոպա, որը կպատկանի իր քաղաքացիներին»:

Հանդիպման մասնակիցները նաև քննարկեցին հարցեր՝ կապված գաղթականության, աշխարհայնացած Եվրոպայում իրագործվող առաքելության, Մերձավոր Արևելքի Եկեղեցիների հետ համագործակցության, ԵԵԿ-ում վարչական բարեփոխումների և այս քրիստոնեական կազմակերպության գործունեության մեջ երիտասարդների ու կանանց դերի հետ:

Լսվեցին նաև զեկույցներ անցած տարվա ընթացքում ԵԵԿ-ի կատարած աշխատանքների մասին, ինչպես նաև ծրագրեր մշակվեցին ապագա գործունեության վերաբերյալ:

Մասնավորաբար Կենտրոնական Կոմիտեն քննեց Ռումինիայի Սիբիու քաղաքում 2007 թ. ԵԵԿ-ի և Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի համատեղ ջանքերով կազմակերպվելիք երրորդ եվրոպական էկումենիկ համագումարի նախապատրաստական աշխատանքների ընթացքը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին